

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

(Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք)



ԷԶՄԻԱԾՆԻ ՀՆԻ ՀՌՈՎՄԵՍԱԿԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ճիշդ երկու տարի առաջ «Արարատ» թերթը կը հրատարակէր լատին արձանագրութիւն մը, Բարդուղիմէոս Կայս. Գեորգեանի ստորագրութեամբ¹: Չորրորդ անգամն էր որ սոյն արձանագրութիւնը լոյս կը տեսնէր², և այն՝ ամենէն աւելի թերի և անյաշող կերպարանքի տակ: Մենք զայն հինգերորդ անգամ մ'ալ պիտի հրատարակենք, ջանալով կատարեալ և մեր Հայ հասարակութեան համար հասկանալի ու ճով ներկայացնել զայն:

Մեր գտնուած է արձանագրարս, ինչ պարագաներով և ինչ վիճակի մէջ: Հայ հրատարակիչք, քարին և զիւտին ազանատես, արդէն կարեւոր տեղեկութիւնները տուած են: Վաղարշապատու արեւելեան պարսպին ի հող թաղուած հիւման մէջ, մօտ Արեգ կոչուած դրան, գտնուած է քառանկիւն և սրբատաճ քարս, երբ տեղույն քնակիչք աղիւսի պատրաստութեան համար պեղումներ կ'ընէին հոն. շատ կարծր է նա, և է սպիտակ³: Տառերու գրաւած

միջոցն է 0,93 մեզր երկայն և 0,61 լայն. եօթներորդ և ութներորդ սողերը համեմատարար նեղ և փոքրատառ են⁴:

Արձանագիրը գտնուած է 1862ի նոյեմբերին. Մոմսըն զայն կը զնէ 1863ին. հաւանականաբար գերմանացի մեծ գիտնականին ծանօթ չէր հայկական հրատարակութիւնը:

Արձանագրիս արտաքին հանգամանքներուն վրայ զաղափար մ'առնելէն յետոյ, փորձենք անոր բովանդակութիւնը և ներքին արժէքը ճանչնալ: Նա ընդ ամէնն ութ սողերէ կը բաղկանայ, և կը վերաբերի ընծայակոս (dédicatoire) տեսակին: Գրուած է լատին լեզուաւ, ինչպէս ըսինք, բայց նմանահան հրատարակութեան մը չգոյութեան պատճառաւ՝ մեզի անկարելի է ըսել թէ ինչ տեսակ տառերով փոքրագրուած է այն:

Ահաւասիկ արձանագիրն՝ ըստ հրատարակութեան Մոմսընի.

Imp. Caes. M. Avrel. Antoino. Aug. Commodus Germa Sarm. max. trib. pot

1. «Արարատ» 1904 Յուլ-Օգոստ. էջ 624:
2. Մեզի ծանօթներէն առաջին տպագրութիւնն է «Համբարտար Ռուսիայ» Մսակոս, 1862, թիւ 37: — Երկրորդ, Բարդուղիմէոս Ռուս զօրավարնը, ուսու լեզուով. «Երկու արձանագրութիւնք Հառփնական ժամանակի, գտնուած Աղբակովաւու մէջ». Թիֆլիզ, 1867. ուղղակի ծանօթ չենք այս գործին: — Երրորդ, հրատարակութիւն Մոմսընի, Corpus inser. lat. 1873 նստոր Գ. մասն Բ. էջ 974, թիւ 6052: — Չորրորդ, «Արարատ» յերթ:
3. «Համբարտար Ռ.», տես վերը:
4. «Արարատ», տես վերը: Գեր. յօդուանագիրքը

քանի մը տառերու ընթերցման վրայ եւս տարակոյններ ունի, բայց միւս երկու իրեն տառը հրատարակողաց համար շատ քիչ բան կոյ տարակուսելի, զորս արդէն իրենց տեղը պիտի յիշենք:

5. Վերջէն գրուած է անուս: Մոմսըն դիտել կուտայ թէ կայսեր անունները սովորական կարգաւ գրուած չեն, և ստոր պատճառը կը համարի այդպիսի նեղատար յախբարի մը մէջ փորագրուած ըլլալը, ուր անշուշտ արուեստագետք կը պահելին: Այսինքն՝ պէտք էր ընել Imp. Caes. M. Aur. Com. Ant. Aug., ինչպէս որ գրած են անդ (c. i. l.) թիւ 349, 1092, 3202, 3385, և այլք:

imp VII Cos III. PP vexill leg. XV Apoll. sub Caelio Calvino. leg Aug pr. pr. curam agente. Licinio Saturnino trib¹ et Aurel Labrase) leg eiusdem.

Արձանագիրս ամբողջացնելու առաջին փորձն եղած է « Համբաւաբեր Ռ. » ի մէջ, Պ. փաւէլ Միխայէլովիչ Լէօնդիկով ուսուցչապետի միջոցաւ, որ թէեւ Գեր. Գէորգեանի հրատարակութենէն յոյժ ընտրելագոյն է, սակայն ամբողջացման և լեզուի սխալներէ զերծ չէ, և հետաւարաբ անոր վրայէն կէս մը մարզաբնութեամբ եղած հայերէն թարգմանութիւն մը պիտի չզուհացնէր Հայ ընթերցողը²:

Մենք պիտի փորձենք լատին բնագիրը կրկին ամբողջացնել, և անոր վրայէն հասկանալի նոր թարգմանութիւն մ'ընծայել, և ապա անցնիլ անոր պատմական արժէքին վրայ:

Մեր առաջարկած ամբողջացումը.

1. Imp(eratori), Caes(ari), M(arco), Aurel(io), Anto-
2. nino, Aug(usto), *Commodo*, Ger-
3. ma(nico), Sarm(atico), Max(imo), trib(unicia) pot(estate),
4. imp(eratori) VII, Co(n)s(uli) III, P(atri) P(atriciae). Vexill(arii)
5. leg(ionis) XV Apoll(inaris), sub Caelio Cal-
6. vino leg(ato) Aug(usti pr(o)pr(ae)tore), curam
7. agente Licinio Saturnino trib(uno) mil(itum),
8. et Aurel(io) Labrase (?) centurione leg(ionis) eiusdem.

Թարգմանութիւն. — « Ինքնակալի, կեսարու, Մարկոսի, Արեղիոսի, Անտոնինոսի, Ազատեայ, Կոմոդոսի, Գերմանիկոսի, Սարմատիկոսի, Աննամեծի, տրիբունական իշխանութիւն (ունոյի), եթերորդ անգամ զօրավարի³, չորրորդ անգամ հիւ-

1. Ռեբերորդ տողին սկիզբը երկու Հայ հրատարակիչք եւս mil(itum) բառը կ'ընթեռնուն. որ շատ լաւ կը պատշաճի: Իսկ Գերման հրատարակիչը էրր տարբերութիւն կը նշանակէ միայն Դերորդ տողի մէջ TRIE և Ցերորդին մէջ LABRAS... EX.

2. Հոս կը գտնէք երկու հրատարակութիւններն ալ հասարակացում, և ընթերցողին կը եզնէք զիստի անհշոտութիւնները և անոնց մեր ընծայածին հետ ունեցած կարեւոր տարբերութիւնները:

« Համբաւաբեր Ռուսոյ » 1862, Գեկո. Imp(erator) Caes(are) M(arco) Avrel(io) Antonino Aug(usto).... (et)M(anico) Sarm(atico) Max(im)o trib(unicia) pot(estate) imp(erator) VII Co(n)s(ule) III P(atre) P(atriciae) Vexill(arii) leg(ionis) XV Apoll(inaris) sub Caelio Calvino leg(ato) Aug(usti) pr(oe)pr(ator)) cur(ante) Ma... (այս յատուկ անունն մնայ անընթեռնի) Saturnino trib uno) mil(itum) ... (այս տեղ երկու բառք կը մնան անընթեռնի) et A Soem (et centurione Soaemio?).

Թարգմանութիւն. — « Ի ժամանակ մեծի կայսեր Յնգարի Մարկոսի Արեղիոսի Անտոնինոսի Ազատուսի ... Գերմանիոյ Սարմատի, ունոյի զՏրիբունական իշխանութիւն, կայսեր ետմերորդի, հիւպատոսի լեբբորդի, Հոր Այլոնեաց Վէստիլեորոսի Վէրբորդի լեգէոնի Ապուլոնեան, ընդ հրամանատարութեամբ Յելիոս Կալվինոյ, ռուբրակի Ազատուսի փոխանակի պրետորի (*), հագաւարութեամբ Մա... Սագուրնի. նոսի Տրիբունի մեծի ... և ... »:

Անուարկ նաև « Արքայտ » ինք, 1904 Յուլիո-Օգոստ, 626. բուրք տպուած դիտատառք. զոր մտառուութեան կամար կը փոքրեացնենք նս.

- Ա). imp caes m aurel anto
- Բ). nino aug ... ger
- Գ). ma sarm max trib pot
- Դ). imp VII cos JIII pp vexill
- Ե). leg XV apoil sub caelio cal
- Չ. vino leg aug prpr cur ma
- Ժ). agente lignio saturnino trib
- Կ). mil biavrel labrasat lege iusoem

Թարգմանութիւնը կը պակսի:

3. Imperator կոչումը շատ մը նշանակութիւններ ունի. բայց մեզի երկուք միայն նոս կարելի որ է: Կայի, Յուլիոս կեսարէն սկսեալ, զոր ձերբկտրած մշտնջենաւոր imperator անուննց, բոլոր կայսեր՝ իբր յաւորքք անոր, իրենց զանակալութեամբ արդէն imperator (Հրամանատու, Սպարապետ բանակաց) կ'ըլլային. անս այս իմաստով է արձանագրութեանս առաջին բառը: Երկրորդ, ամեն անգամ որ կայսր մը՝ ինքն անձամբ կամ իւր տեղակալի ձեռքով բանակի մ'առաջնորդէր և պատերազմ մղէր, իւրբանջիւր անգամ նոր imperator կ'առջնուուէր լեգէոններն և ձեռակուտէն. որով կայսր մը կրնար Առաջին, Երկրորդ, Կրորդ, և այլն, անգամ imperator կոչուիլ. ջրամեք և արձանագրութիւնք անթիւ որդիակերէ կ'ընծայեն անոր: Այս առմամբ է անս imperatori VII բացաւորութիւնը:

պատի, հօր հայրենեաց¹։ Գրոշաւորք² հըն-
գետասաներորդ լիզէոնի Ապողոնեան³, ընդ
(հրամանատարութեամբ) Կելիոսի Կալուի-
նոսի՝ տեղակալի Օգոստոսի փոխանակ-
պրեստորին⁴, հոգաբարձութեամբ⁵ լիկի-
նիոսի Սատուանիմոսի տրիբունի զօրաց, և
հարիւրապետութեամբ Արեղիոսի Լարրա-
սայ նորին լիզէոնի » :

Ինչ ժամանակի կը վերաբերի արձա-
նագրութիւնս։ Արդէն պատասխանած կ'ըլ-
լանք այս հարցման, երբ որոշակի ճանչ-
նանք կայսեր անունը, որուն նուիրուած
է քարս : Երկու Հայ հրատարակիչք Մ.
Արեղիոսի կ'ընծային զայն, բայց շփոթ-
մամբ . անշուշտ այդ անուան ներկայու-
թիւնը գիրենք կը մոլորցընէ : Տարակոյս
չկայ թէ Կոմոգոսին (180—192) նուիրուած
է արձանագիրս, ինչպէս Մոմսըն ալ գրած
է՝ առանց սակայն պատճառն աւելցնելու .
բայց այդ պարզ է : Նախ, պէտք է գիտ-
նալ որ Կոմոգոս որդեգիր ըլլալով Մ. Ա-
րեղիոսի, ժամանակին սովորութեան հա-
մեմատ՝ անոր անուններն եւս կը կրէր
իրենին վրայ : Երկրորդ, Մ. Արեղիոս եր-
բեք չորրորդ անգամ հիւպատ եղած չէ :
Յետոյ՝ արդէն ծանօթ է որ Կոմոգոսայ պէս
« անգութ ըսն գիտմեղիանսս, զեղծ ըսն
զ'իբրոն » կայսեր մահուընէ վերջ, ծերա-
կոյտը հրովարտակով հրամայեց անոր ա-
նունը ջնջել բովանդակ հասարակաց յի-
շատակարաններու վրայէն . ահաւաստիկ
պարագայ մը որ քաջ կը մեկնէ թէ ինչն

Կոմոգոսի անունէն և ոչ իսկ տառ մը ըն-
թեանի է արձանագրութեանս վրայ : Գար-
ձեալ, Կոմոգոսէ դուրս ուրիշի մ'եւս չի
կրնար ըլլալ, վասն զի միւս յիշեալ ա-
նուանը՝ միայն Կոմոգոսի կը պատկանին :
Կոմոգոսայ չորրորդ հիւպատուութիւնը իյ-
նալով Հրոմպոս շինութեան 936 թուա-
կանին, կրնայ ըստ զանազան հաշիւներու
183 կամ 185 թուականին պատկանիլ
արձանագիրս :

Ինչ է անոր պատմական արժէքը : Հայ
հրատարակիչներէն Գեր. Գէորգեան ուզած
է բացատրել մեզ զայն, բայց դժբախտա-
բար Գեր. յօդուածագիրը, առանց միւս
բառերուն երբեք ուշ դարձնելու, միայն
լատին [E]U[S]D[EM] դերանուան կիսուն
մէջ մեր Սոյեմա թնգաւորի անունն ու-
զեր է տեսնել⁶, և հետաքրքրական եզրա-
կացութիւններ հաներ է անկից : Աւելորդ
կը համարինք հոս յիշել այդ եզրակացու-
թիւնները, որոնցմով նա իւր հակառա-
կորդներն յաղթահարած կը համարի, քա-
նի որ անոնց հիմը դերանուան (eiusdem)
մը սխալ ընթերցման վրայ կանգնած է :

Ըստ մեզ, նոյն ժամանակի հայկական
պատմութիւնէն ողղակի բան մը չի բովան-
դակեր արձանագիրս, ինչպէս տեսնուեցաւ
արդէն . սակայն անոր այդ առեն վաղար-
շապատու մէջ գրուիլը՝ սերտ կապ ունի
ժամանակին դէպքերուն հետ : Ահաւաստիկ
թէ ինչպէս : Վաղարշ Գ (149—191) ար-
քայ Պարթեւեաց՝ իւր Հայաստանի վրայ ու-
նեցած գերիշխանութեանց մասին՝ զրկանք

1. 177ին տառ այդ տիտղոսը :
2. Vexillarius կը կուռէին դրոշակիրք : Նոյն ա-
նուանկողմիցն ուներ հատորիսի գունդ մը զօրաց,
որ թեեւ լիզէոնի մասն կը կազմէր, սակայն յառախ
լիզէոնէ դուրս՝ առանկի գրոշակի (vexillum) մը տակ
կը բաղէր և արծուէրօշոնեմէ դուրս կը պատերազմէր :
3. Ապողոնեան կամ Նեղեոսաներորդ լիզէոնը վիւս-
պատանու ժամանակէն ի վեր Կապպադովկիս կը զբո-
նուէր, նստիւով ի Սատապա քաղաք փոքուն Հայոց,
որ Կապպադովկիս նահանգին մասն կը կազմէր :
4. Իբր Օգոստոսի ժամանակ Հռովմէական նահանգ-
ներն երկու տեսակի, այսինքն կայսերական և ծերա-
կուտական նահանգներու բաժնուեցան, կայսրն իւր նա-

հանգներուն վրայ կը դրկէր տեղականեր, որոնք legati
Augusti կամ Caesaris, և մասնաւոր legati Augu-
sti propraetore կը կուռէին : Ինչպէս որ է նաև մեր
արձանագրին մէջ : Իսկ ծերակուտական նահանգներու
վրայ կ'երթային պրետորք կամ փոխհիւպատաց, որոց
կ'ընկերէին legati սոսկ և կամ legati propraetore
կուտաները :
5. Curam agens, իսկ վերջերս curator կուռէին
այն պաշտօնեայք՝ որոնք պէտք եղած պահուն՝ ծերա-
կուտէն կամ բարձր պաշտօնականերէն կ'ընտրուէին
յատուկ գործի մը կատարման և հոգաբարձութեան
համար :
6. SDEMը կարգաթիւ է SOEM :

կրելով Անտոնիոս Պիոսէն (138-161),
 յարձակեցաւ Հռովմայեցւոց երկիրներուն
 վրայ, ի Միջագետս, և յաղթեց անոնց:
 Արդէն իւր խոսորով զօրավարը զրկած էր
 ի Հայս, Եղեգիտ կամ Ելեգիտ (Elegea)
 քաղաք առ Տարսուսեան Եփրատս, ուր
 Հռովմայեցւոց թիկնածուն՝ Աքեմենիդեայ
 որդին՝ Սոյեմոսը կը թագաւորէր: Սոյեմոս՝
 կապպազովկիոյ կուսակալ Սեւերիանոսը
 օգնութեան կանչեց. բայց Պարթեւը զօրա-
 ցան, և Հռովմայեցի բանակը նետերու տակ
 կը սպառէր: Սեւերիանոս մեռաւ, բայց
 խոսորով ալ գերի ինկաւ. սակայն վաղարշ
 արդէն հասած էր ի Հայս և յաղթութիւնն
 իրենց կողմ վճռած: Այդ ժամանակ Սոյեմ
 կը փախչէր ի Հռովմ, և կորուսածին փո-
 խարէն՝ հոն բարձր պատիւներ կը ստա-
 նար:

Հռովմ քիչ մ'ուշ՝ բայց սաստիկ ցըն-
 ցուեցաւ, և Լ. Վերոս (161-169) կայսրը,
 զահալից Մ. Արեղիոսի (161-180), ա-
 բեւեւը կը դիմէր 162ին: Ինքն Անտոնըայ
 մէջ գեղիւելով, Ա.տ. կաստիոսը կը զրկէր
 վաղարշի դէմ, իսկ Ստ. Պրիսկոսը և Մար-
 տիոս Վերոսը ի Հայս: Հայք դժուարաւ՝
 բայց նուաճուեցան, և Արտաշատ անուոե-
 ցաւ և աւերեցաւ (163): Մարտիոս Վերոս
 յանձնեց թուկիդիտէս անուամբ մէկու մը՝
 որ զՍոյեմոս տանի ի Հայս, այս երկրորդ
 անգամ գահին վրայ հաստատելու համար:
 Լ. Վերոս, ինչպէս նաեւ Մ. Արեղիոս
 163ին Հայկական (Armeniacus) հըռ-
 չակուեցան, և « աւերեալ Արտաշատու
 տեղ՝ Հայոց աշխարհին մայրաքաղաքն ե-
 զաւ վաղարշի հիմնած վաղարշապատ ա-

ւանը՝ Նոր քաղաք անունն աննելով: Նոյն
 միջոցին վաղարշապատու մէջ կար հայ
 (Հռովմայեցի?) պահակաւորն ու մը, զոր
 Պրիսկոս հոն թողուցած էր՝ »:

Իրաց այս վիճակը տեսցէ մինչեւ կո-
 մոդեայ մահը (180-192): Նոր մայրաքա-
 ղաքին շինութեան համար կ'աշխատէին
 նաեւ հռովմայեցի զօրքերն, ինչպէս ուրիշ
 կայսերական նահանգներու մէջ եւս՝ մա-
 տուցած են սոյնպիսի ծառայութիւններ²:
 Հաւանականաբար քաղաքն ամբողջովին
 կամ զխաւոր մասամբ լինցած ըլլալու էր
 կոմոդեայ չորրորդ հիւպատութեան ատեն,
 և ահա այդ առթիւ հռովմայեցի պահա-
 կազուեղը անոր նուիրած է այս արձանա-
 գրութիւնս, որուն վրայէն քիչ յետոյ պի-
 տի ջնջուէր կոմոդեայ անպատու անունը՝
 հրամանաւ ձերակուտին:

Այսչափով բաւական մեկնած կը հա-
 մարինք թէ՛ բաւական և թէ՛ պատմա-
 կան իմաստով, հաստատելով — հակառակ
 « Համբաւարք » ի և Գեր. Գէորգեանի կար-
 ծեաց՝ — թէ արձանագիրս գրած է հռով-
 մայեցի այն պահակազուեղը, (այս դէպ-
 քիս մէջ յականէ vexillarii), որ Մ. Ա-
 րեղիոսի և կոմոդեայ օրերուն մնաց ի Հայս
 ի պաշտպանութիւն իրենց կողմանէ զրուած
 թագաւորին, և աշխատեցաւ նոր մայրա-
 քաղաքին՝ վաղարշապատու՝ շինութեան,
 որուն աւարտման առթիւ ընծայուեցաւ այս
 արձանագիրս կոմոդեայ կայսեր, շուրջ
 185 Յ. Գ.:

Հ. Յ. ԱՍՏՈՐԵԱՆ

1. Մարտիոս, « Հանդէս Ամսօրեայ » 1906 Փետր.:
 Ահաւասիկ բուն իսկ Դիոնի (ՀԱ. Կովարք.) խօսքերը:
 « Մարտիոս Վերոս գթուկիդիտէս զրկեց որ զՍոյեմ
 ի Հայաստան տանի, ... արդ, հաննելով Նոր քաղաքը,
 զոր Պրիսկոս գրած հռովմայեցի պահակազուեղը կը պա-

կէր, և զգոնացուցանելով զբողոսածները բանիւ և զօր-
 ծով, յայտարարեց որ առաքնեմ (մայրաքաղաք) ըլլայ
 Հայաստանի »: Տես նաեւ խոր. Բ. 62.

2. Հրատարակութիւն Մամբրի. Corpus ins. lat.
 հատ. Գ. Թիւ 782 և 6052:

